Ատրպետ

Քոռ-Եղիկ

ԻԵ

ԻԵ

Երբ ոչխարը տեղավորեցին, ցրվեցին պրծան, Եղիկի իգդիրցի բարեկամն ասաց.

Ղազարը ապրանքի նմուշները ճանաչել է, քեզ փնտրել է տալիս:

Հետևյալ առավոտ Եղիկը ընկերներով անցավ օսմանցու սահմանը և այնտեղից քշեց դեպի Ալաշկերտ: Ճանապարհին ամեն տեղ մեկի կարողությունը կողոպտելով, անճարին հասցնելով, երկու շաբաթ սարսափ տարածեց Ալաշկերտում և Բասենում: Վերջապես հոգնած, դադրած, նամանավանդ Ասլիին կարոտած մտավ Արաքսի ձորը և գիշերով հասան Քերս, Միրզի ջրաղացը: Այդ ապաստանում երկար հանգստանալ չէր կարելի. գիշերը քիչ քնելուց հետո դուրս եկան դեպի Շիրակ: Երբ բարձրացան Ալաշի կողքերը, նրանց պատահեց մի ծերուկ, որ գալիս էր Թախտից և պիտի անցներ Արփաչայը: Ծերուկը ողորմելի պարկ ուներ ուսին և մի նեցուկ գավազան, Եղիկը հետաքրքրվեց, թշվառի վիճակը ուզեց իմանալ:

Ափի, որտեղի՞ց ես, հարցրեց:

Աստված էլ կորցրել է իմ դավթարս, գիտե՞մ որտեղից եմ. մի ժամանակ արզրումցի էի, հետո ախլցխացի դարձա, հիմի էլ եկել Գյումրի ենք ապրում:

Որտեղի՞ց ես գալիս, ասաց Եղիկը:

Արզրումից գնում եմ Գյումրի:

Ինչպես երևում է, ընտանիքդ մե՞ծ է:

Աստված տվել, չէ խնայել, յոթ աղջիկ ունեմ, գնում եմ մեծին կարգելու:

Էրզրումից փող շատ բերած կլինի՞ս, ափ…

Քանդվի այն Արզրումը, ինչպես քանդվել է, հարյուր քեսա առնելիք ունեմ, քսան դուրուշ չկարողացա ստանալ. ունեցած-չունեցածս էլ թողի, գնում եմ խայտառակ, չեմ իմանում ի՞նչ երեսով դուրս պիտի գամ մանր ու խոշորիս առաջ:

Մինչ այդ Եղիկը քսակը հանեց և երկնցուց ծերուկին, ասելով.

Աստված մեծ է, ի՞նչ ես շատ դարդ անում, կհասցնե:

Աստված մեկին հազար վարձատրե, ասաց ծերուկը լացակումած, ձեռքն երկնցուց և քիչ էր մնում Եղիկի ձեռքը համբուրե, բայց նա չթողեց:

Է՛հ, ուրիշ ի՞նչ կա, ի՞նչ չկա, ասաց Եղիկը ծերուկից բան իմանալու մտքով:

Կռվի տարին օսմանցու զորքին հարյուր բեռն Երևանու բրինձ տվի, տասն անգամ փաշաների մոտ գնացի և փողիցս զոնե մի ողորմություն անգամ չստացա: Բանակի հրամանատարի մուրհակն եմ ներկայացնում, ինձ ասում են՝ գնա, նրանից ստացի, ես այն գոռբեգյոռի թաղած տեղն անգամ չգիտեի, որ մի գնայի և սիրտս հովցնեի:

Ուրիշ ի՞նչ են խոսում, կռիվ խո չկա՞:

Այդպես բան չկա, բայց չեմ իմանում, թե ինչի՞ Սթամբոլից Ղարս փող են ղրկում, մի ծածուկ բան կա, բայց ևս չհասկացա:

Ինչի՞ց իմացար, որ փող են բերելու Ղարս

Պարտեզում հիսուն ձիավոր սպասում են, որ Արզրումից եկող չափարին առնեն տանեն: Դեռ խոսք եղավ, թե մի ինչ-որ դաչաղ Է դուրս ընկել Եղիկ անունով, նրանից վախենում են, այդ պատճառով Էլ պատրաստություն են տեսել վաղօրոք:

Այս որ լսեց Եղիկը՝ փառավորվեցավ, և ընկերները ժպտացին:

Ափո, ասաց Եղիկը, ի՞նչ տամ, որ ինձի տաս օսմանցու բանակի փաշայի հարյուր բեռն բրնձի մուրհակը:

Որդի՛, ինչի՞ս է պետք, ա՛ռ քեզի. ո՛չ հաց կտա, ո՛չ ջուր:

Քու ինչի՞ն է պետք, ես փաշաների հետ գործ ունիմ, հաշիվներ ունիմ մաքրելու, կարելի է պետք գա: Եղիկը մուրհակը ծալեց, գրպանը դրեց և աչքով արավ Մելոյին, որը հարյուր մանեթ փող տվեց ծերուկին, և Եղիկը մնաց բարով անելով ծերուկին, ետ դարձան դեպի Թախթ: Եղիկը նպատակը չհայտնեց ընկերներին, բայց նրանք նկատեցին, որ հոգեկան ծանր մտածմունքի մեջ էր իրենց առաջնորդը: Երբ Սուբաթանի մոտով, Յահնիների կողքից անցան, հեռվից երկու ձիավոր նկատեցին, որոնք Ղարսից էին գալիս: Եղիկը ընկերներով մի կողմ քաշվեցավ, Մոսոյին ճանապարհի վրա թողեց, որ լրտեսե անցորդներին: Ճանապարհորդները գյուղականներ էին, որոնք ռուսների սահմանի մարդիկ էին, Ղարսից բան-ման առել, վերադառնում էին դեպի իրենց բնակավայրերը: Երբ սովորական հարց-բարևները վերջացրին՝

Ո՞ւր եք գնում, հարցրեց Մոսոն:

Այն կողմը, Արփաչայից դենը, պատասխանեցին: Մեր գյուղում այս կիրակի հարսանիք կա, քիչ ռոմ, շաքար, ային-օյին ենք տանում:

Խե՞ր է, ի՞նչ հարսանիք է:

Մեր գյուղի Համփան՝ Քեհյի աղջկան, Ասլիին՝ Եղիկի նշանածին, տանում է յուր տուն: Ախ Եղիկ, որտե՞ղ ես:

Մոսոն նկատեց, որ դրանք Եղիկի բարեկամ տղերք էին, բայց չէր իմանում ինչպե՞ս վարվի: Քիչ մտածելուց հետո՝

Արեք գնանք Եղիկի մոտ, ասաց Մոսոն, և ճանապարհորդները, թեև տատանվելով, վախենալով, հետևեցին Մոսոյին, բայց երբ հեռվից նկատեցին Եղիկին՝ հանգստացան: Նրանք գյուղական ընկեր տղերք էին և Եղիկի հետ միասին մեծացած. վստահ էին, որ նրանից իրենց վնաս չի հասնիլ, իսկ տեսնել այդ հերոս դարձած ընկերին, վաղուց փափագում էին:

Եղիկը փաթաթվեց նրանց, կարծես հարազատ եղբայրները լինեին… Խեղճը սրտակցից, հարազատից գաղափար չուներ, ինքը մոր մինուճարն էր, հայրն էլ մամի մինուճարն էր եղել: Բոլոր գյուղական բարեկամ-ծանոթներին շատ բարև ուղարկեց, և ինքը մնաց մոլորված: Չգիտեր՝ դառնար դեպի Ղարաքիլիսա, թե շարունակեր յուր ուղին:

Գրիգոր, այսօր ի՞նչ օր է, հարցրեց նա: Հինգշաբթի, ասաց Գրիգորը:

Լավ է, ասաց, քշեցեք ձիաներդ դեպի Պարտեզ:

Նույն գիշերը հասան, բայց գյուղ չմտան, այլ առաջ գնացին դեպի անտառ: Մինչև լույս անտառի խորքում կրակ վառեցին ու հանգստացան: Լուսադեմին ճանապարհի նշանավոր կետերում զետեղվելուց հետո կարևոր հրամաններ տվեց ընկերներին Եղիկը և բարձրացավ Հարամ-Վարդանի բարձունքներից դիտելու ճանապարհների անցուդարձը: Երկար չսպասեցին. սնանկ վաճառականի ասածն ուղիղ էր և Արզրումից մասնավոր չափարը (սուրհանդակ) մեծ ձիավորների խմբով գալիս էր: Եղիկը ետ դարձավ և ընկերներին հավաքելով անտառում մի կիրճի մեջ, որոշ տեղերում իրենց դիրքը բռնած նստան: Բավական ժամանակ անցնելուց հետո առաջավոր երեք ձիավորներ եկան անցան, որոնց հետևում էին երկու հազար քայլ հեռու ևս երեք ձիավոր: Սրանց թույլ տվին անցնելու: Իսկ սրանից քառորդ ժամ հետո եկան մոտ երեսուն ձիավորներ, ծանր քայլերով, հետները չորս ջորի, բեռնավորված փողով: Եղիկը նշանը տվեց, և չորս գնդակները չորս գլխավորների գլորեցին: Առանց սպասելու չորս էլ փշտովի գնդակ արձակեցին, որոնք նույնպես իրենց զոհերն ունեցան: Չափարների գլխավորների գլորվելուց հետո արդեն հետևողները

շվարեցան: Ահագին անտառ, ծառերի միջից գալիս է գնդակը, ո՞վ գիտե, որտեղ են ապաստանած և քանի՛ հոգի են: Մի քանի գնդակ արձակեցին չափարները, բայց զուր, ծառերի բներում մնացին այդ գնդակները: Գրությունը սոսկալի էր: Եղիկը երկրորդ, երրորդ անգամ լցրեց հրացանը և ամեն անգամ ճարպիկ ձիավորների վրա էր ուղղում գնդակը: Գրիգորը, Մելոն ու Մոսոն նույնպես կրակ դարձած, իրար ետևից կարկուտի նման գնդակ թափեցին չափարի ձիավորների վրա, այնպես որ սրանք կարծեցին, թե անտառում առնվազն քսան-երեսուն մարդ է թաքնված: Դրանից հետո մի քանի գնդակ էլ հասցրին ջորիներին, որոնք թավալվեցան իրենց գանձով: Ճար չկար, միայն փախուստը կարող էր չափարի ձիավորներին փրկել. այդպես էլ արին, բայց Եղիկի և ընկերների գնդակները նրանց չէին թողնում խույս տալով մահից ազատվելու: Երեք հոգի մնացին սատկած ջորիների գլխին, ասաց Եղիկը:

Այդ ջորիների բեռները բարձեցեք ձեր ձիաներին, եթե մեռնիլ չեք ուզում:

Իսկույն հրամանը կատարեցին:

Դե՛հ, ձեր զենքերը թափեցեք այդտեղ և բեռնավորված ձիերը քշեցեք այս կողմը:

Այդ էլ կատարեցին, և երբ բավական հեռացան, ասաց Եղիկը.

Այս օրդու մյուշյուրի (բանակի հրամանատար) սերքին տարեք Ղարս, փաշային տվեք և ասեք կովի տարին զորքին տրված հարյուր բեռն բրնձի փողը եկավ տարավ Քոռ-Եղիկը: Այս սպանություններն էլ նրա համար կատարվեցին, որ փաշաները, տասը տարի է հարյուր անգամ նրանց խնդիր տրվեց, և չկատարեցին աղքատի, թշվառի խնդիրը: Թող ուրիշ անգամ ժողովրդին չկողոպտեն և անմեղների կոտորածի պատճառ դառնան:

Չափարները ետ դարձան հետի, իսկ Եղիկը և յուր ընկերները Սողանլու անտառների խորքերից առաջ գնացին դեպի Փանակի կողմերը, որտեղ երեք ձիաբեռն ոսկին թաղելուց հետո մի ձիաբեռը լցրին մաս-մաս չորս ձիու խուրջինները և Գյոլայի անտառով Արդահանի վրայով դիմեցին դեպի Ախալքալաք: Կիրակի առավոտ Ախալքալաքից դուրս եկան, եղանակը ամպամած էր, և երբեմն մանր ձյուն էր բրդում, երբեմն էլ քամին մոլորեցնում էր:

Արիա լճի մոտ քիչ մնաց նրանք մոլորվեին. ճանապարհից արդեն դուրս էին ընկել: Վերջապես զանգերու ժամանակ հազիվ հասան Շիշթափա: Թեև նոյեմբերի սկիզբն էր, բայց Գուգարքի սարերն ու սարահարթերը հոկտեմբերից ծածկվում են սպիտակ սավանով: Ձիաներին հարկավոր էր կեր տալ: Իջան, գյուղ մտան և մի երկու ժամ ձիերին կերակրելուց և երեքն էլ հանգստանալուց հետո, երբ մութը լավ ընկած էր, դուրս եկան: Աշնանային մառախլապատ մութ գիշեր և երկար ճանապարհ, հազիվ մեջգիշերին նրանք հասան Գյումրի: Տղե՛րք, քշեցե՛ք, ասաց Եղիկը, քշեցեք, թե չէ հարսը տարավ մղդսի Կյուրեղը: Եվ ուղիղ: Հարսանիքը բռնել էին այդ գիշեր: Ողջ Ղարաքիլիսան հավաքվել էր մղդսի Կյուրեղենց տունը. էլ դափ, էլ զուռնա, էլ դահալ, էլ մեյ, ձայն-ձայնի էին տվել, երկինքը թնդացնում: Մղդսի Կյուրեղը արզրումցի աղաներին էլ էր կանչել, որոնց համար սազ-քյամանչա չէ, աշղներ ու ասողներ, մի խոսքով՝ իրար էին խառնվել:

Մինչև էրզրումցի աղաներին քառասուն տեսակ կերակրով, աշբազով ու չերեզբազով (խոհարար և կարկանդակագործ) մանր ու բարակ հյուրասիրել էր մղդսի Կյուրեղը, մինչև ահագին բազմություն գյուղացիներին կշտացրել էր, մինչև խնամոնց և խաչախպոր-դասին շահել էր, արդեն կեսգիշերն անցել էր: Մինչև դուրս եկան, մինչև հասան խնամոնց տունը, մի ժամ էլ այդտեղ կորցրին: Ասլին էլ մի ժամ ավելի տանջեց տալցուներին և ներցուներին, որոնց հազար ու մի տանջանքով, մոր, քրոջ, հարսի և մորաքրոջ աղջիկներին հազիվ զիջավ և մի կերպ հագնվեցավ հարսանեկան զարդերը: Լաց էր լինում, մոնչում էր, կատաղում էր Ասլին, բայց ճար չուներ:

Մենք էլ նազ անելով ենք հագել այդ շորերը, մենք էլ հագել ենք, բայց երկու օրից հետո ոչ միայն մոռացել, այլ անչափ ուրախացել ենք, ասում էին ազգական տիկինները:

Վերջապես Ասլին, երկար մտածելուց հետո, վճռեց մտքումը՝ պսակվել, գնալ մղդսի Կյուրեղենց տունը, բայց ո՛չ նրանց հարս դառնալ, ո՛չ Մուքեին կնիկ: Նա համոզված էր, որ երբեք Եղիկը իրեն չէր մոռանալու և թողնելու ուրիշի դռանը:

Էլի փողերը հնչվեցան, էլի դուրս եկավ հարսնևորը, և թագավորն ու թագուհին թափորով կողք-կողքի գնացին եկեղեցի: Մուքեն երանության մեջ էր զգում իրեն, իսկ Ասլին չարչարանքի: Շատ հույս ուներ Ասլին, որ մինչև եկեղեցի մտնելը մի

ճար կհասնի, բայց զուր: Երբ երգերն սկսեցին, երբ տերտերն Ասլու ձեռքը հանձնեց Մուքեին, սարսռաց խեղճ կույսը, բայց ակամա ձեռքը բաց չէր թողնում Մուքեն:

Աչքալույս, հա, աչքալույս, գոռում էին ամեն կողմից: Թափորը ետ շարժվեց. դուրս եկան եկեղեցուց և նույն եղանակով սկսեցին դիմել մղդսի Կյուրեղենց տունը: Հանկարծ երկու, երեք, չորս փշտովի կրակ իրար ետևից: Բոլորը կարծեցին, թե հարսնևորներն են, ջիրիդ խաղացող ձիավորները: Ասլին ցնցվեց, զգաց, հոտ առավ, որ մի բան պիտի կատարվեր, բայց սաստիկ զայրացել էր, որ այնքան ուշացել էր:

Մեկ էլ գոռացին.

Եղի՛կը, Եղի՛կը, զենք առե՛ք, հասե՛ք, օգնեցե՛ք… Մելոն մի քանի բուռ ոսկի սփռեց հարսնևորներին: Հարսնևորները խառնվեցան, վազեցին ոսկին ժողովելու, տակնուվրա եղան: Եղիկը ձին քշեց, Ասլիի թևից բռնելն ու թարքը գցելը մեկ եղավ: Ձին մտրակեց ու առաջ անցավ: Գրիգորը, Մոսոն ու Մելոն նրա քամակից հեռացան: Գրիգորը գոռում էր.

Գյուլլա պաղեցնող չկա՛, հրամեցե՛ք:

Մելոն կանչում էր. ոսկի՛ ժողվողներ, եկե՛ք, թալան է:

Բայց ուշ էր:

Երրորդ օրը Եղիկը յուր Գյոկչայի տանն էր՝ Ասլիի հետ:

1898 թ.